


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հոգ. 10 ՄԶՆ.
Վաւաւաց 2 խրա
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 ՄԶՆ.
Վաւաւաց 1 խրա
Պատր երկիրներու 50 Ֆր.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ է. աւելի անգամներու
համար գատ սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 վարտ պղինձ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած իրաւորաց ան-
ձակքը խմբաց բաժնէն վրայ է
Լրացրելով վարտերու նախա-
կամ օր և ինչ որ լինի իրաւոր
— Տնօրէնի անօրէն զգուշ. Կաւա-
թիա Կատարողը ծանուցանելով թիւ
198, Կորստանք Մարտի գրասեն-
եակը :
Ծանուց ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ. յոյս ամ, և
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԽԱՄԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 31 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսական լրագիրը մերթ ընդ-
մերթ մեր վրայ խօսել կ'սկսին : Անց-
եալ շաբթու Կոյուսի մէկ դիտողու-
թիւնն յիշած էինք, որ ցոյց կուտար
թէ հաւանական է որ Ռուսիա Գը-
րիստոնէից դատը պաշտպանելու
սկզբան հետեւելով, օր մը Հայոց վը-
րայ ևս դարձունէ իւր տիրաւորն և
անոնց համար ընէ՝ ինչ որ արդէն ը-
րա Պոլսոյցի համար, Մոսկուայի
կողմէն Կանադայի լրագիրն ալ գի-
տել կուտայ թէ վեհաժողովն Հրէա-
կան ազգին խնդիրն յարգեց, իսկ
Հայոց խնդրոյն անուշադիր դառնու-
ցաւ : « Թուրքական բարենորոգում
ներ, խոստանալով, և ասոր հետե-
ւանքն եղաւ Հայոց պաշտպանութեան
և քիւրդերէ հալածումն :

Իրաց վիճակը դժբաղդարար ըս-
տոյդ կը հանէ Ռուսական թերթին
խորհրդածութիւնը : Սերվիա և Բու-
մանիա Հրէից քաղաքական իրաւուն-
քը հաստատելու համար իրենց աղ-
դային սահմանադրութեան մէջ բա-
րեւիթութիւն մտցունելու պարտա-
ւորեցան, քանզի Եւրոպա չէր ուզեր
անոնց անկախութիւնը ճանչել մինչև
որ ըստ դաշնագրին տրամադրու-
թեան՝ Հրէից հաւասարութիւնը չը
հռչակէին : Բայց իրօք Հայոց համար
անորոշ բարենորոգումներ տրամա-
դրելով, դանդաղ առաւել ստորին
դասած եղան Հրէայիներէն, և այսօր
անկարելի է ժխտել թէ Սերվիոյ և
Ռումանիոյ Հրէայք քաղաքականապէս
աւելի բարձր դիրք մը կը բռնեն
քան թէ Թուրքիոյ Հայերն : Իրաւ է
որ Օսմանեան սահմանադրութիւնն
ալ ամեն տարեւալ հաւասարութիւ-
նը ճանչած է. բայց երբ դորձողը
բութեան մասն աչքէ անցունենք,
անհնար է որ կարենանք մեք մեզի
խաբել : Հայաստանի գաւառաց մէջ
քանի՞ Հայ պաշտօնատարք կան, և
ո՞ր է կենաց և ընչից սպասելու
թեան համար պէտք եղած խառն
օստիկանութիւնը, խառն գաւառ-
բաններն և ինչ Դաշնագիրը բարենո-
րոգումներ խոստացաւ Հայոց համար
ալ, սակայն դեռ անոնց ծրագիրն
իսկ չպատրաստեցաւ, և օտար թեր-
թեր աւելի կը գանեն Բ. Դրան խոս-
տացած բարենորոգումները « Թուր-
քական բարենորոգում » անուանելով
հեղենելու և Հայերն 'ի յուսահատու-
թիւն մղելու :

Բ. Դրան և երկրին շահը կը պա-
հանջեն սակայն որ խոստացեալ բա-
րենորոգումներն իրագործելու ձեռք
դարձուն : Դատ անդամ կրկնուած
ճշմարտութիւն մ'է թէ Հայոց շահ

ըն թուրքիոյ ամբողջութեան հետ
սերտիւ միացեալ են, և այսպիսի հա-
ւատարմ ժողովրդեան մ'իրաւունքը
նուիրագործել մեծ արդարութիւն
մ'էր, որպէս զի ներքին ներդաշնա-
կութիւնը կատարեալ լինի : Բայց ա-
հա տակաւին բարենորոգմանց անո-
րոշ մնալուն պատճառաւ՝ Կաղէթա
Կանադայի խորհուրդը կուտայ Ռու-
սիոյ՝ իրեն վերաբերեալ Հայաստա-
նի բաժնին մէջ անկախ պետութիւն
մը հաստատել ընդ իւր հովանաւո-
րութեամբ, որով միանգամայն կը
ցրէ այն կարծիքը թէ Ռուսիա միշտ
կաշխատի իւր հովանոյն ներքեւ դըռ-
նուղ ժողովուրդները Ռուսացնել :
Այս խորհուրդը Ռուսիոյ համար խնա-
օդատակար կը դատէ յիշեալ թերթը,
վասն զի աբով Անդղիոյ պահանջմանց
և Ռուսիոյ դէմ ըրած դրաւարտութեանց
վերջ տուած կը լինի : « Ռուսիա, կը
յարէ նոյն թերթին, այնպիսի անկախ
պետութիւն մը հաստատելով՝ չեղը
երկիր մը կ'ստեղծէ իւր հարաւային
սահմանաց վրայ, և Հայերն, որք դա-
րերով թագաւորութիւն ունենին, մըշ-
տընչեալս բարեկամ կ'ընէ իրեն :
Երկիր մը՝ որ Հայաստանի միւս մա-
սերուն համար ձգողական կեդրոն
մը կը լինի՝ Թուրքիոյ համար փոստա-
կար է Անդղիա իրաւունքը չունենար
այն ժամանակ բողոքելու թէ իւր
վաճառականութեան ճանապարհնե-
րը կը գոցուին և միանգամայն Ռու-
սիա իւր նպատակին հասած կը լինի :
Վերջապէս յիշեալ թերթը Ռուսիոյ
շահերուն իրաւ օգտակար կը համա-
րի իւր սահմանադրութեան բնակեալ
ազգութեանց նպատակը, որպէս զի
իրենց կենսելով ապրին և ինքնօրի-
նութեամբ կառավարուին :

Բարենորոգմանց կարօտ ժողո-
վրդոց երեւակայութեան վրայ այս-
պիսի խօսքերուն ազդեցութիւնը բա-
ցատրելու հարկ չկայ Ռուսիոյ Ռուսիոյ
ձեռքէն պէտք է առնուի այն բա-
րոյական մեծ դէնքն, որով ազատա-
բարութեան դեր մը խաղալով՝ իւր
ժողովրդոց երեւակայութեան վրայ
իսկ ոչինչ նուազ ազդեցութիւն կը
բանեցնէ : Ռուսական թերթերուն
յայտարարութիւններն առ այժմ լոկ
խօսք կրնան լինել : Բայց իրաւ հա-
ւանական ալ է որ Ռուսիա՝ առաջ-
գային մէջ Եւրոպայի և մանաւանդ
Անդղիոյ դիմագրութեան առաջըն
առնելու համար յիշեալ թերթին խոր-
հուրդը գործադրէ : Թերեւս դայն
գործադրելու իսկ պարտաւորի, որ
պէս զի Անդղիա յունիս Կի պայմա-
նագրութեան համաձայն Սահման-
թուրքիոյ ամբողջութիւնը պահպա-
նելու իրաւունքը չունենայ : Արդ՝
այսպիսի հաւանականութեան մ'ա-
ռաջըն առնելու և Հայերը մշտնջե-
նաւորապէս Օսմանեան կայսրութեան
հովանոյն ներքեւ արգարութեան հա-

մեմատ իրենց արժանաւոր իրաւանց
տէր ընելու համար՝ խնամուեն բա-
րենորոգումներ հարկ են, որոց յա-
պաղումը կրնայ անպայման վնասներ
պատճառել :

Եղիպտոսի դործերուն վրայ հետ-
ըզհետէ նորանոր լուրեր կուգան :
Խալիվն պաշտօնանկ ըրած Անդղիա-
ցի և Գաղղիացի նախարարք, Պ. Պ.
Վելսըն և Պլինիէր, առանց իրենց
կառավարութեանց հրամանին հըրա-
ժարական տալ չեն ուզեր : Իսկ եր-
կու կառավարութիւնը արտօնութիւն
չեն տուեր անոնց հրաժարելու : Ա-
հաւասիկ տարեգրութեանց մէջ նը-
մանը չտեսնուած դէպք մը. օտար
երկրի մը մէջ տեղական կառավարու-
թեան գլխոյն կողմէն անուանեալ եր-
կու կառավարութեան հրաժարական տալ չեն
ուզեր առանց իրենց կառավարու-
թեանց հրամանին, թէ և անոնց կող-
մէն կարգեալ չեն, այլ միայն յանձ-
նարարեալ : Անդղիա և Գաղղիա Խը-
տիվին վեհապետը չեն. Եղիպտոսի
վրայ գերիշխանական իրաւունք մի մի-
այն վեհ. Սուլթանն ունի դաշնագրու-
թեանց զօրութեամբ, բայց Սուլթանն
իսկ՝ ըստ դաշնագրութեանց՝ իրա-
ւունք չունի Եղիպտոսի ներքին գոր-
ծոց միջամտելու, նախարար մը յանձ-
նարարելու կամ յանձնարարեալ նախա-
րարի մը հրաժարականն արտօնելու :
Այսու ամենայնիւ, Անդղիա և Գաղ-
ղիա առանց դաշնագրութեամբ այս-
պիսի իրաւունք մ'ստացած չեն լուր,
յանուն իրենց շահուց և հզորագու-
նին իրաւամբ Եղիպտոսի դործոց կը
միջամտեն : Անդղիոյ արտաքին գոր-
ծոց նախարարն խորհրդական Պ.
Պուրք փարիզ դնացի է Եղիպտոսի
գործոց վրայ Պ. Վալտինկոթի հետ
բանակցելու : Երկու կառավարու-
թիւնը միարեւոյն կերելին. բայց առ-
այժմ իրենց ընկալեցը չկրնար որոշիլ :
Անցեալները մէջ թէ թէ կ'ընեն
գիրք կըսէր որ եթէ Խալիվն իրեն
պարտականութիւնները չկատարէ,
Անդղիա և Գաղղիա իրենց խօսքը զօ-
րութեամբ պիտի պաշտպանեն : Բայց
Թալմիլ խօսքին նայելով, Խալիվն նը-
կատմամբ բռնու միջոցներն ա-
հա հաւանական չեն :

Ստոյգն այս վերջին կարծիքը կե-
րելի, քանզի թէ և Եւրոպայի միւս
տէրութիւնը Անդղիոյ և Գաղղիոյ գոր-
ծողութեան ընդարձակ առաջադէպ կը
թողուն Եղիպտոսի մէջ, սակայն Անդ-
ղիա արդէն Չուլուի և Աֆրանստանի
կալիւներն և Պրիմանիոյ թագաւորին
սպառնալիքն ունենալով իւր առջև,
չկրնար միայնակ Եղիպտոսի բաղ-
դախնդրութեան մը մէջ նետուիլ :
Իսկ Գաղղիա տրամադիր չէ Մէքսի-
կայի արշաւանքը կրկնելու, և ասոր հա-
մար Արևելեան Բուլղարի խառն գը-
րաւման մասնակցել չէր ուզեր, որ

պէս զի իւր զօրութիւնն ամբողջ պահէ
Եւրոպայի մէջ իւր շահերն ազդեալապէս
պաշտպանելու և Գերմանիոյ ներկա-
մամբ իւր գիրքն ամրացնելու համար :
Ռուսի հաւանական է որ Խալիվն առ-
այժմ անկախօրէն կարենայ գործել,
և երկու տէրութիւնը միշտ իրեն խոր-
հուրդ տալով թողուն տակաւին որ-
պէս զի Եղիպտոսի պարտոյց տու-
կաներն ամբողջ վճարելու համար
յանձն առած պարտականութիւնը
կատարէ : քանզի Դորին Բարձրու-
թիւնը թէ՛ տէրութեանց ընդհանուր
հիւպատոսներուն և թէ՛ Դոնտրայի
և փարիզի Պորտաներուն դրկած յոյ-
տարարութեան մէջ կըսէ եղեր թէ
կարող է իւր պարտքը վճարել, թէ-
պէս հաւատացողներ չգտնուին : Գու-
ցէ ֆէյլահները կեղեքուելով մէկ եր-
կու կարօն տակաւին ամբողջապէս
վճարուի, բայց ոչ ոք կը հաւատայ թէ
Եղիպտոսի նման փոքրիկ երկիր մը,
որոյ բնակիչներն ստուար մեծամաս-
նութեամբ ֆարաւոնի ժամանակին
նման տղքատ և օտրուկ են, կարե-
նայ ահագին պարտոյց բեռի մը տու-
կալ, որոյ դուռնար կարճենք հարիւր
միլիոնը կանցի : Պաշտօնական յոյ-
տարարութեանց նայելով, մինչև մար-
տի ամսոյն վերջն Եղիպտոսի միաց-
եալ պարտոյց տեսչութիւնը մէկ մի-
լիոն իրացին աւելի ստակ ընդունած
է, որ տարւոյն առաջին եռամսոյն
վերջն ըսել է, և այս հաշուով առ-
նուառն տարին չորս միլիոն իրաւ պը-
տի վճարի պարտոյց տոկոսներուն և
գլխավճարներուն համար : Եղիպտո-
սի եկամուտը տարին 8 միլիոն իրացի
չափ է. ո՞ր տուն կրնայ իւր եկամու-
տից կէսը վաճառուներու ստիպո-
տալով կանգուն մնալ : Հետեւաբար՝
թէպէս Խալիվ Խալիվ Խալիվ « անան-
կութեան » գէմ կը բողոքէ, բայց իւր
աննախատես և շուայ վարչութիւնը
պարտք պարտքի վրայ դիմելով ան-
հրաժեշտ ըրած է զայն :

Արևելեան կառավարութեանց մեծ
սխալներէն մին է որ անտեսաւոր են
կառուցման բողոքովն արհամարհե-
լով՝ յանդգնաբար իրաւունքներն
ստպարեցին մէջ կը նետուին երբ վարկ
կը վայելեն, առանց խորհելու թէ
վարկը միշտ սահման մ'ունի, յորմէ
անդին անխտահարութիւն է բողոքովն
Եղիպտոս Եւրոպական նախարարներ
գործածելով իւր վարկը պահպանե-
լու հաւանականութիւն ունենէ : Պ.
Վելսըն Ռուսիային փոխառութիւն մ'ը-
րած էր, բայց Պ. Ռուսիոյ զգալով որ
Խալիվն գործի մը մէջ մտած էր,
ստակներուն մեծ մասը չորկեց, և
Եղիպտոսի կառավարութիւնը գաւա-
բանալու պարտաւորեցաւ անոր գէմ
որպէս զի փոխ առնուելիք գումարը
կարենայ ձեռք անցունել : Եղիպտո-
սի գործոց այս ընթացքը Բ. Գրան
Եւրոպական վարկին վերադաշնապէս



UNITED SERVICE
SOFT-TABLET

Մենտ շահոտ օճառւ, մորթը կը կակուղցնէ ու լեղի ջուրով ալ կը վերբրի՛ն, տեսալը խիտա աղնիւ ու դինը շտա ածան է՝ կը ծախաւի Կ. Պոլիս Գալաթիա Միմաստն ու Ընկիւտայ Ամերիկա յի ժաղաղան: